ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի՝
2023 թվականի ապրիլի 3-ից 5-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաք գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Արմեն Ղուլարյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ:

2. Գործուղման վայրը և ժամկետը՝ Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաք 2023 թվականի ապրիլի 3-ից 5-ը:

3. Հրավիրող կողմը՝ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ ՄԱԿ-ի ԵՏՀ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել Հողերի կառավարման հարցերով Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) աշխատանքային խմբի (այսուհետ՝ WPLA) 13-րդ նստաշրջանին:

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային այս խմբի նիստերը կայանում են երկու տարին մեկ անգամ՝ հողի կառավարման ոլորտում քաղաքականություն մշակելու և հիմնական ուղղությունները նախանշելու նպատակով:

13-րդ նստաշրջանը ՄԱԿ-ի ԵՏՀ անդամ պետությունների ներկայացուցիչների համար ապահովեց կարծիքների փոխանակման միջազգային հարթակ հողի կառավարման հարցերի շրջանակում: Նստաշրջանի առանցքային հարցերից են հանդիսացել ՄԱԿ-ի ԵՏՀ տարածաշրջանի կառավարություններին մարտահրավեր նետող մեգատենդենցները, ներառյալ էկոհամակարգերը և հողի կառավարման անվտանգությունը:

5. Քննարկված թեմաները/հարցերը՝

ՄԱԿ-ի ԵՏՀ անդամ պետությունների ներկայացուցիչներին ներկայացվեց տեղեկատվություն.

- ՄԱԿ-ի ԵՏՀ քաղաքաշինության, բնակարանային շինարարության և հողի կառավարման հանձնաժողովի կողմից 82-րդ և 83-րդ նիստերին ընդունված՝ աշխատանքային խմբի գործունեության հետ կապված որոշումների վերաբերյալ:
- WPLA-ի 2020-2021 թվականների աշխատանքային ծրագրի շրջանակներում 2021 թվականի տասներկուերորդ նստաշրջանից ի վեր իրականացված միջոցառումների, ինչպես նաև 2022-2023 թվականների աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ

Մասնակիցներին ներկայացվեցին նաև WPLA-ի 2024-2025 թվականների երկամյա աշխատանքային ծրագրի և 2025-2030 թվականների իրականացվելիք աշխատանքների տեխնիկական առաջադրանքի նախագծերը, որոնք հաստատվեցին քննարկման արդյունքում:

Ի թիվս վերոնշյալի, նստաշրջանին անդրադարձ կատարվեց ՄԱԿ-ի անդամ պետությունների առջև ծառացած գլոբալ, այդ թվում՝ էկոհամակարգերին և հողերի կառավարման անվտանգությանը առնչվող մարտահրավերներին: Նիստի ընթացքում քննարկվեցին նաև տարածաշրջանում և դրա սահմաններից դուրս մի շարք հարցեր՝ կապված արագացված թվայնացմանը, հողերի կառավարման ապագա դերակատարությանը, կայուն զարգացմանը և գույքային իրավունքների պաշտպանվածությանը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տեղի ունեցան քննարկումներ հողային ռեսուրսների կառավարման ոլորտի կարողությունների զարգացման և միջազգային գիտելիքների փոխանակման ուղղությամբ WPLA-ի կողմից 12-րդ նստաշրջանից ի վեր կազմակերպված հետևյալ թեմատիկ սեմինարների և վեբինարների արդյունքների վերաբերյալ.

1. Եվրոպայում հողի կառավարման մարմինների կադաստրային քարտեզագրում և ռազմավարություն,
2. Տվյալների փոխգործունակություն. օգուտները հողի կառավարման ոլորտի համար,
3. Բաց տվյալների առավելությունները և թերությունները հողային կառավարման մեջ,
4. Աշխարհատարածական տեղեկատվություն – կրթության և կարողությունների մակարդակի բարձրացման կարիքներ,
5. Երկրներում ոչ ֆորմալ բնակավայրերի բարելավում. քաղաքականության խորհրդատվության և կարողությունների զարգացման ներկա իրավիճակ և կարիքներ:

Տեղի ունեցավ նաև «Թվային փոխակերպում և հողի կառավարում. Կայուն պրակտիկաներ ՄԱԿ-ի ԵՏՀ տարածաշրջանում և դրա սահմաններից դուրս» հետազոտության շնորհանդեսը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՄԱԿ-ի ԵՏՀ քաղաքաշինության, բնակարանային շինարարության և հողի կառավարման հանձնաժողովի քարտուղար Գյուլնարա Ռոլլի հետ հանդիպման ընթացքում քննարկվեց հանձնաժողովի աջակցությամբ 2017 թվականին մշակված Հայաստանի Հանրապետության բնակարանային տնտեսության հողային ռեսուրսների կառավարման Երկրի նկարագրի վերանայման հնարավորությունները՝ կապված հանրապետությունում վերջին տարիների ընթացքում ծառացած մարտահրավերների լուծման համատեքստում:

Առաջարկն արժանացավ նախնական հավանության:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառումն անցավ արդյունավետ և կառուցողական մթնոլորտում՝ ստեղծելով նախադրյալներ և հնարավորություն ՄԱԿ-ի ԵՏՀ անդամ պետությունների համակողմանի համագործակցություն և փորձի փոխանակում ապահովելու համար:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայաստանի Հանրապետության բնակարանային տնտեսության հողային ռեսուրսների կառավարման Երկրի նկարագրի վերանայման հարցին ընթացք տալու համար պաշտոնական գրությամբ դիմել ՄԱԿ-ի ԵՏՀ:

9. Գործուղվող՝ Արմեն Ղուլարյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը, թվական

Recoverable Signature

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ քաղաքաշինության կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ վարչապետի N 308 - Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝
Արմեն Ղուլարյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

_____
(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաք
5. Գործուղման ժամկետները՝ 2023 թվականի ապրիլի 3-ից 5-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

_____

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Արմեն Ղուլարյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	390931	390931
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)	179	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	69507	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	139014	139014
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, USD)	141	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	54752	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	164256	164256
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (դրամ)		694201	694201

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝

Recoverable Signature

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

Արամ ՄԿՐՏՉՅԱՆ